**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1**
**05.09.2022թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/19Հ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի**

**ք. Երևան** «16» «12» **2022թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անահիտ Գևորգյան» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գևորգյանը, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 05.09.2022թ. կնքված N **ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/19Հ** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N 1864-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. *Համաձայնագրի առարկան***

***Կողմերը որոշեցին՝***

1.1 Պայմանագրով նախատեսված 2022 թվականին իրականացվելիք ծառայությունների գինը նվազեցնել **393 333** (երեք հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամով, քանի որ 2022 թվականին իրականացվելիք Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ66+000-կմ80+000 հատվածի հիմնանորոգման շինարարական աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով կատարվել են նվազեցումներ, և այդ աշխատանքների չկատարված մասը տեղափոխվել է 2023 թվական, ուստի համարժեքորեն նվազեցվել է նաև հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման գումարը՝ **9 391 249** (ինը միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար երկու հարյուր քառասունինը) ՀՀ դրամի փոխարեն կազմելով **8 997 916** (ութ միլիոն ինը հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր տասնվեց) ՀՀ դրամ՝ Պայմանագրի գինը թողնելով անփոփոխ:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2022թ նոր Վճարման ժամանակացույցը համաձայն՝ Հավելված 1-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Անահիտ Գևորգյան» ԱՁ
Ք. Գյումրի, Մուսայելյան փ 49/2
«Արարատբանկ» ԲԲԸ Գյումրի մ/ճ
ՀՀ 15100429584700
ՀՎՀՀ 57348351
տնօրեն
Ա. Գևորգյան

----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/19Հ գնման պայմանագրի
16 « 12» 2022թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀ դրամ)

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման ենթակա աշխատանքների անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | 98111140/52 | Հեղինակային հսկողության ծառայություններ | --- | --- | --- | --- | --- | --- | --- | --- | 4 695 625 | 8 997 916 | 8 997 916 | 8 997 916 | **8 997 916** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Անահիտ Գևորգյան» ԱՁ
Ք. Գյումրի, Մուսայելյան փ 49/2
«Արարատբանկ» ԲԲԸ Գյումրի մ/ճ
ՀՀ 15100429584700
ՀՎՀՀ 57348351
տնօրեն
Ա. Գևորգյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ